

М. А. АРАКЕЛЯН

Бюраканская астрофизическая обсерватория понесла тяжелую утрату—20 января 1983 г. скоропостижно, в расцвете творческих сил скончался старший научный сотрудник, доктор физико-математических наук, член КПСС с 1950 г. Марат Арсенович Аракелян.

М. А. Аракелян родился в 1929 г. в г. Горисе АрмССР в семье служащего. Один из первых выпускников астрономического отделения физико-математического факультета Ереванского государственного университета—он в 1951 г. поступил на работу в Бюраканскую обсерваторию. Через год он был направлен в аспирантуру при Ленинградском государственном университете. В 1956 г. М. А. Аракелян защищает кандидатскую диссертацию, выполненную под руководством члена-корреспондента АН СССР О. А. Мельникова.

В течение 1955—1960 гг. М. А. Аракелян работает в Бюраканской обсерватории на должности младшего научного сотрудника. С 1960 г. до 1966 г. он работает доцентом в Ленинградском государственном университете, а с 1966 г. снова переходит на работу в Бюраканскую обсерваторию на должность старшего научного сотрудника.

Научная деятельность М. А. Аракеляна относилась к области теоретической астрофизики, к изучению физики звезд и преимущественно к исследованию галактик высокой поверхностной яркости. Особого внимания заслужили его работы по спектральному и статистическому исследованию галактик. Важнейшие результаты исследований М. А. Аракеляна в этой области были подытожены в диссертации на соискание ученой степени доктора физико-математических наук, успешно защищенной им в 1977 г.

Научные работы М. А. Аракеляна были высоко оценены как советскими, так и иностранными астрофизиками. В 1973 г. он был избран членом Международного Астрономического Союза. М. А. Аракелян является редактором ряда публикаций международных астрономических конференций, соавтором учебного пособия «Астрономия» (на арм. языке) для учащихся средних классов, автором более шестидесяти научных статей.

М. А. Аракелян занимался также научно-педагогической деятельностью. В 1982 г. он был избран заведующим кафедрой астрофизики и теоретической физики Армянского педагогического института им. Х. Абовяна.

Светлая память о Марате Арсеновиче Аракеляне навсегда останется в сердцах всех, знающих его.

## Մ. Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

*Կյանքից անժամանակ հեռացավ ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների դոկտոր, ՀՍՍՀ ԳԱ Բյուրականի աստղադիտարանի ավագ գիտաշխատող, Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի ամբիոնի վարիչ, 1950 թվականից ՍՄԿԿ անդամ, աստղաֆիզիկոս Մարատ Արսենի Առաքելյանը։*

*Մ. Առաքելյանը ծնվել է 1929 թ. Հայկ. ՍՍՀ Գորիս քաղաքում, ծառայողի ընտանիքում։ 1951 թ. ավարտելով Երևանի պետական համալսարանի ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետը աշխատանքի է անցել Բյուրականի աստղադիտարանում։ 1955 թ. ավարտել է Լենինգրադի պետական համալսարանին կից ասպիրանտուրան և 1956 թ. պաշտպանել թեկնածուական դիսերտացիան։*

*1960—66 թթ. նա աշխատել է Լենինգրադի պետական համալսարանում, որտեղ նրան շնորհվել է դոցենտի կոչում, իսկ 1966 թ.-ից՝ Բյուրականի աստղադիտարանում։*

*Մ. Առաքելյանը ապրում էր իր գիտական գործունեության ծաղկման շրջանը։ Նրա աշխատանքները վերաբերվում են տեսական աստղաֆիզիկայի բնագավառին, աստղերի ֆիզիկայի ուսումնասիրությանը և հատկապես բարձր մակերևութային պայծառության գալակտիկաների հետազոտություններին։ Առանձնապես ուշադրության արժանացան Մ. Առաքելյանի աշխատանքները՝ կատարված գալակտիկաների սպեկտրալ և վիճակագրական ուսումնասիրության ուղղությամբ։ Մ. Առաքելյանի կողմից ստացված կարևորագույն արդյունքները 1977 թ. ամփոփվեցին իր դոկտորական դիսերտացիայում։*

*Մ. Առաքելյանի աշխատություններն արժանացել են բարձր գնահատականի իր կոլեգաների կողմից։ 1973 թ. նա ընտրվել է Միջազգային աստղագիտական միության անդամ։ Մ. Առաքելյանը հանդիսացել է մի քանի Միջազգային խորհրդակցությունների աշխատությունների խմբագիր, «Աստղագիտություն»՝ միջնակարգ դպրոցի ձեռնարկի համահեղինակ, և ավելի քան վաթսուն մասնագիտական հոդվածների հեղինակ։ Միաժամանակ նա զբաղվում էր գիտա-մանկավարժական աշխատանքով։*

*Մարատ Առաքելյանի պայծառ հիշատակը միշտ վառ կմնա մեր սրտերում։*

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ